ԱԿՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1830–1880-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԲԱԲԼՈՒՄՅԱՆ Ա.
arpinebablumyan@rambler.ru

Արևմտյան Հայաստանի հարավ-արևմտյան շրջանում գտնվող բնակավայրերից իր կարևորությամբ առանձնանում էր Ակն քաղաքը, որը գտնվում էր Մեծ Հայքի և Փոքր Հայքի միջակայքում: Օսմանյան տիրապետության տակ անցնելուց հետո Ակնը մաս կազմեց Սեբաստիայի էյալեթի, իսկ 1880-ականներից շրջակա շուրջ 10 գյուղերի հետ որպես առանձին գավառակ կցվեց Խարբերդի նահանգին: Ստորև փորձենք անդրադառնալ XIX դարի Ակն գավառակի բնակավայրերին, հայ բնակչության կենսագործունեությանը, թվաքանակին:

Ակնի մասին տեղագրական արժեքավոր աշխատության հեղինակ Հ. Ճանիկյանը գտնում է, որ ակնցիների նախնիները հաստատվել են այս տեղանքում, քանի որ այն առատ էր ջրերով, արոտավայրերով, ուներ առողջարար օդ, և բացի այդ, Ակնի տեղանքը հարմար էր արտաքին հարձակումներից պաշտպանվելու համար[1]: Հեղինակի կարծիքով այստեղ հաստատված հայերի ամենաստվար հատվածը ծագումով Վասպուրականից է եղել: Տարբեր ժամանակներում եկել են նաև Էրզրումից, Քղիից, Բալուից, Խարբերդից, Ուրֆայից, Մադենից, Արաբկիրից, Տիվրիկից, Զառայից, Սեբաստիայից, Թոքատից և այլ վայրերից[2]: Հ. Ճանիկյանը որպես Ակնի բնակիչների, հիշատակում է նաև Զմյուռնիայի շրջակայքից ու Բուրսայի որոշ բնակավայրերից եկածներին (Մանիսենք, Պայինտուրենք, Կեօրտէզենք և Տինարենք) և զարմանք հայտնում, թե ինչպես են այդ կողմերից գաղթականներ եկել դեպի Ակն, չէ՞ որ, սովորաբար գաղթականներն ուղղվում էին հենց նշված բնակավայրեր[3]: Տվյալ դեպքում, թերևս, մեծ նշանակություն է ունեցել Ակնի քաղաքակիրթ, ժամանակակից կենտրոն լինելու հանգամանքը: Գրեթե բոլոր ժամանակակիցները, ովքեր անցել են Ակնով, խոսում են քաղաքի գեղեցկության, տների հարմարավետության, բնակիչների կենցաղի բարձր մակարդակի

[1] **Ճանիկեան Յ.,** Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 12:
[2] Նույն տեղում, էջ 15:
[3] Նույն տեղում:

մասին: Անգլիացի ինժեներ Հ. Բարկլին գրում է, որ Ակնում կային բազմաթիվ լավ կառուցված տներ՝ շրջապատված խնամված այգիներով, այնպես, որ քաղաքը շատ տպավորիչ ու լավ տեսք ուներ[4]: Ավելին, "The Missionary Herald" ամսագրի համարներից մեկում Ակնի մասին խոսելիս նշվում է, որ այն «տվյալ տարածքի ամենահարուստ և աշխարհիկ բնակավայրն է, հետևաբար (միսիոներների համար աշխատելու) ավելի դժվար դաշտ է, քան մյուսները»[5]: Հ. Բարկլին ևս շեշտում է այս հանգամանքը. «Ակնը ավելի քաղաքակիրթ ու լավ քաղաք էր, քան մեր տեսած բնակավայրերից շատերը»[6]:

Բացի նշված գաղթականներից, տարբեր ժամանակներում Քղիից, Չարսանջակից, Չմշկածագի գյուղերից Ակն էին գալիս նաև հայ, թուրք, քուրդ գործավորներ՝ բեռնակրություն անելու, պարտեզներում և շինություններում աշխատելու: Նրանցից ոմանք նաև երկար մնալով ամուսնանում և հաստատվում էին Ակնում[7]: Մյուս կողմից՝ շատ էին և Ակնից արտագնա աշխատանքի տարբեր բնակավայրեր մեկնողները, որոնցից շատերը, ինչպես հաճախ է լինում նման դեպքերում, հաստատվում էին այնտեղ, որտեղ աշխատել էին երկար տարիներ: Այս առումով, Ակնի և շրջակա գյուղերի հայ բնակիչները մեծ համբավ ունեին, քանի որ ողջ Օսմանյան կայսրությունում հայտնի էր ակնցու հաճախ գաղթելու հատկությունը: Բնակչության նման տեղաշարժերի պատճառները մի քանիսն էին: Նախ և առաջ տեղանքը լեռնային էր, երկրագործության համար չկային գոհացնող պայմաններ. մշակվում էր շատ քիչ հացահատիկ, հողատարածքի մեծ մասը ծածկված էր այգիներով, որոնց մեջ գերակշռում էին թթենիները: Հետևաբար, տեղանքի բնակիչները ստիպված էին ապրուստի միջոցներ փնտրել՝ այլ վայրերում աշխատելով: Ակնցի գաղթականների մասին է խոսում Գ. վրդ. Սրվանձտյանցը, որը գտնում է, որ ակնցիների գաղթի պատճառը երկրագործության ու առևտրի բացակայությունն է, թեև հեղինակն ավելացնում է նաև, որ քիչ չեն և այնպիսիք, որոնք հրաժարվում են թողնել իրենց մեծածախ տները, Ակնի օդն ու ջուրը և հաստատվել այլ վայրերում[8]: Գաղթելու մեկ այլ պատճառ պետք է համարել հայ բնակչության անապահովության ու մշտապես ոտնձգությունների առարկա լինելու հանգամանքը: Գ. Սրվանձտյանցը, Ակնի և շրջակա լեռնային տեղանքի բնակիչների

[4] **Barkley H.,** A Ride Through Asia Minor and Armenia, London, 1891, p. 323.

[5] The Missionary Herald, Boston, 1858, December, p. 378.

[6] **Barkley H.,** նշվ. աշխ., էջ 322:

[7] **Ճանիկեան Յ.,** նշվ. աշխ., էջ 15:

[8] **Սրվանձտեանց Գ.,** Թորոս աղբար կամ ճամբորդ Հայաստանի, հ. Ա, 1879, էջ 244:

մասին խոսելիս նշում է, որ ամենուր քրդեր ու գզլպաշներ են, ու թեև հայերը առևտուր են անում նրանց հետ, այնուամենայնիվ, շատ են վնասվում վերջիններիս կողոպուտների, սպանությունների պատճառով[9]:

Ակնից արտագնա աշխատանքի մեկնողների հիմնական ուղղություններն էին Կ. Պոլիսը, Խարբերդը և Զմյուռնիան: Այս մասին է նշում նաև Հ. Ճանիկյանը. «Կ. Պօլսոյ հայ գաղթականութեան մէջ Ակնեցին՝ բազմահայ գաւառաց համեմատութեամբ իւր համեմատական բաժինն եւ գուցէ աւելին ունեցած է»[10]: Կ. Պոլսից հետո ակնցիների գաղթած մյուս քաղաքը եղել է Խարբերդը: Կ. Պոլիս, Խարբերդ գաղթած ակնեցիներից շատերը հասան բարձր դիրքի ու հարգանքի: Հիշարժան է հատկապես Կ. Պոլսի Տատյան ամիրաների գերդաստանը, որի նախահայրերից Մահտեսի Առաքել Տատը սերում էր Ակնի Կամարակապ գյուղից: Վերջինս մայրաքաղաքում էր հաստատվել XVIII դարի վերջին:

Ակնի մասին խոսելիս, անհնար է չանդրադառնալ այն գյուղերին, որոնք ժամանակին հայաբնակ են եղել, սակայն ժողովրդագրական տարբեր փոփոխությունների արդյունքում արդեն XIX դարի ընթացքում հիշատակվում են որպես ոչ հայաբնակ: Նման գյուղերի ցանկում կարելի է թվարկել Ակնի Ուռեկ, Կաղրան, Արտոս և այլ շրջակա գյուղերը, որոնց նախկինում հայաբնակ լինելու մասին են փաստում տարածքում պահպանված եկեղեցիների ավերակները, հողատարածքների հայերեն անվանումները: Ս. Էփրիկյանի կարծիքով, Ակնի տարածքում բազմաթիվ են հայկական անվանումներով բնակավայրերը, որոնց հայ բնակիչները ոչ միայն հարկադրաբար կրոնափոխ են եղել, այլ նաև՝ փոխել են լեզուն[11]: Ակնի վերաբերյալ կարևոր ուսումնասիրության հեղինակ Ա. Քեչյանն այս առթիվ գրում է. «Անհաւանական չէ որ Ակն քաղաքին թուրքերուն մէկ մասն ալ ծագումով Հայ եղած ըլլայ: Այս ենթադրութեան իբր փաստ կրնայ ծառայել եւս այն պարագան որ կարգ մը թուրք նշանաւոր ընտանիքներ ընտանեկան մականուն ունէին, մինչ մահմետականները ընդհանրապէս մականուն չունեին: Այսպէս, Ակնայ մէջ կային Էշկի օղլու, Սէիլիկ օղլու, Խաղնետեր օղլու, Տէտէ օղլու, որոնց Էշկիճոնց, Սեիլիկոնց, Խաղնետերենց, Տէտէենց կըսեին Հայերը: Այս թուրքերը շատ մոլեռանդ էին: Թէեւ հայերէն շատ լաւ կը հասկնային, բայց բնաւ հայերէն չէին խօսիր եւ նոյնիսկ բառ մը

[9] **Սրվանձտեանց Գ.,** նշվ. աշխ., էջ 255:

[10] **Ճանիկեան Յ.,** նշվ. աշխ., էջ 16:

[11] **Էփրիկեան Ս.,** Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903–1915, էջ 84:

չէին արտասանիր»[12]: Կրոնափոխությանն իբրև ապացույց հիշատակվում էին Ակնի շրջակա բազմաթիվ գյուղերի անուններ, որոնց մեջ հայ բնակիչ գոյություն չուներ արդեն XIX դարի սկզբներից: Նման բնակավայրերից էին Արակա, Հաբեղնոց, Էգրեկ, Բակեր, Բազմաշեն, Ապրանք, Վեց գեղի Էգրեկ, Միջին գեղ, Վան գեղ, Փշատի, Ուռեք,Դար-Գլուխ, Ավերակ, Արտոս, Արգո, Հողդար, Բոշայի Կաղրան, Ս. Սանդուխտ, Սերկևիլ, Պարտիզակ, Հեղիտար, Աղվորիկ, Աղօրիք, Խասկալ, Պաշ Վարդենիք, Մեծ և Փոքր Վարդենիք, Փետրական, Կաշո, Ըռապատ, Արկուրի, Խնձորիկ, Տանձիկ, Կծու, Դրնիկ, Վանկուկ, Պարաձոր, Խարաձոր, Հայտեսի, Աշուքկա, Թարխնիկ, Չիվլիկ, Էրկին, Հլու[13]: Հեղինակը կարծում է, որ նշված գյուղերի բնակիչները մասամբ եղել են հայեր, որոնք թրքացել են:

XIX դարի ընթացքում այս գործընթացը ևս շարունակվել է. այս անգամ արդեն հարկադրաբար իսլամացմանն ու թուրքացմանը նպաստել է նաև հայերի պանդխտությունը: Օրինակ, եթե ակնեցիների մի մասը դիմել է արտագնա աշխատանքի, հետագայում նաև հաստատվել տվյալ բնակավայրում, ապա ծննդավայրում մնացածների թվաքանակը նվազել է, և վերջիններս հայտնվել են ավելի անբարենպաստ պայմաններում հարկադրված լինելով վճարել նաև մեկնածների տուրքերը: Սրան հետևել է իսլամանալու հարկադրանքը: Դեռևս 1847 թ. որպես Ապուչեխի թաղ հիշատակվող Չարազ բնակավայրը հետագայում նշվում է արդեն որպես ոչ հայաբնակ: Տվյալ դեպքում բնակիչների մի մասն անցել է Ապուչեխ[14]: Նման կերպ իսլամացվել են ոչ միայն Ակնի, Արաբկիրի, այլ նաև Չմշկածագի, Չարսանջակի և այլ շրջանների տարբեր բնակավայրերի հայ բնակչության հատվածներ, հայաթափվել են մի շարք գյուղեր:

Ապրելու համար նպաստավոր պայմանների բացակայությունը, ինչպես նաև անապահով ընտանիքներին սատարելու ցանկությունն էր, որ ստիպեց ակնցի ազգային գործիչներին և մտավորականներին 1865 թ. Ակնում հիմնել Նահապետական ընկերություն, որի նպատակն էր մի նոր գյուղի համար անհրաժեշտ տեղանք գնել և այնտեղ երկրագործ ընտանիքներ բնակեցնել: Ակնի մոտակայքում տեղանք չգտնելով, նոր բնակավայրի համար հող գնվեց Մշո դաշտում, Ս. Կարապետ վանքի հողերի մոտակայքում[15]: Թեև այս գյուղը

[12] **Քէչեան Ա.,** Ակն եւ ակնցիք, հ. Բ, Փարիզ, 1952, էջ 156:
[13] **Ճանիկեան Յ.,** նշվ. աշխ., էջ 14:
[14] **Քէչեան Ա.,** նշվ. աշխ., էջ 67:
[15] **Սրվանձտեանց Գ.,** նշվ. աշխ., էջ 260:

չվերածվեց նահապետական ընտանիքներով բնակավայրի, նրա հիմնումը կարևոր նախադեպ կարող էր հանդիսանալ դրամատեր արևմտահայերի համար:

Չնայած Ակնից գաղթելու արձանագրված միտմանը, հեղինակների հավաստմամբ, քաղաքի հայ բնակչությունը չէր պակասել: Այսպես, Ակնի բնակիչների թվաքանակը, ըստ Ղ. Ինճիճյանի, կազմում էր 2200 տուն, որից կեսը հայ էին, կեսը՝ տաճիկ[16]: 1835 թ. են վերաբերում Էրզրումում անգլիացի հյուպատոս Ջ. Բրանտի նոթերը, որոնց համաձայն, Ակն քաղաքն ուներ 2700 տուն բնակիչ, որից 2000-ը՝ մահմեդական, 700-ը՝ հայ[17]: Իսկ արդեն "The Missionary Herald" ամսագրի 1852 թ. համարներից մեկում նշվում է, որ քաղաքն ուներ 4000 հայ բնակիչ, որոնցից ոմանք բողոքական էին[18]: Զարմանալի է, որ խոսք չկա հայ ուղղափառների մասին, որոնց առկայությունը Ակնում ևս փաստ էր: Թերևս, այդ պատճառով է, որ վերջին տվյալով հայերի թվաքանակն ավելի նվազ է, քան Ջ. Բրանտի նոթերում նշվածը: "The Missionary Herald" ամսագրի 1853 թ. համարներից մեկում այս անգամ Ակնում հաշվվում է ընդամենը 1000 հայ, իսկ շրջակայքում՝ շուրջ 20000 նույն հավատքի մարդիկ (հայ – Ա. Բ.)[19]: Ավելի ուշ շրջանին՝ 1870-ականներին է վերաբերում մեկ այլ տվյալ. միսիոներ Օ. Ալենը նշում է, որ Ակնը ունի 1500 տուն հայ բնակիչ, նույնքան էլ՝ թուրք[20], թերևս նա նկատի ունի Ակն քաղաքի և շրջակա գյուղերի բնակիչներին:

1870-ականներին, ըստ բրիտանացի զինվորական Ֆ. Բարնբիի, Ակն քաղաքն ուներ 10000 բնակիչ՝ հայեր ու թուրքեր[21]: 1878 թ. քաղաքի առաջնորդական տեղապահ Տեր Հարություն քահ. Երեցյանի՝ պատրիարքարան հղված վիճակագրության համաձայն, Ակն քաղաքում և շրջակա գյուղերում հաշվվում էր 9428 հայ բնակիչ[22]: 1880 թ. վերաբերյալ տվյալ է բերված Ակն գավառակի պատմությանը նվիրված հուշամատյանում, որի համաձայն,

---

[16] **Ինճիճեան Ղ.,** Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ. Եւրոպիոյ. Ափրիկոյ և Ամերիկոյ, Վենետիկ, հ. Ա, Ասիա, մաս 1, 1806, էջ 306:

[17] **Brant J.,** Journey through a Part of Armenia and Asia Minor in the Year 1835, Journal of the Royal Geographical Society of London, vol. 6, 1836, London, p. 204.

[18] The Missionary Herald, 1852, Dec., p. 358.

[19] The Missionary Herald, 1853, February, p. 51.

[20] The Missionary Herald, 1872, June, p. 179.

[21] Armenians in the Ottoman Empire. An Anthology of Transformation 13th –19th Centuries, Edited by V. Ghazarian, Waltham, Mass., p. 487-489.

[22] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 34/III, թ. 3:

նշված բնակավայրերում ապրում էր 9967 հայ բնակիչ[23]: Հուշամատյանում մեջբերվում է և նաև 1883 թ. վիճակագրություն, որի համաձայն, Ակնի և գյուղերի հայերի թվաքանակը կազմում էր 8856, թուրքերինը՝ 10300, որոնցից 1700-ը շիա մահմեդական քրդեր էին[24]: Ուշագրավ է, որ օտար աղբյուրներում հայերի թվաքանակի վերաբերյալ տվյալներն ավելի մեծ են, քան հայկական աղբյուրներում առկա թվերը: Խոսքը հատկապես "The Missionary Herald" ամսագրի 1853 թ. համարներից մեկում հրապարակված տվյալի մասին է, որի համաձայն, հայերի թվաքանակն Ակնում և շրջակա բնակավայրերում կազմում էր շուրջ 20000: Թերևս, վերջին տվյալը վերաբերում էր ոչ միայն Ակն գավառակի հայությանը, այլ նաև մի քանի այլ հարակից բնակավայրերի: Այնուամենայնիվ, ամփոփենք, որ 1880-ականներին Ակնի գավառակում ապրում էր ավելի քան 10000 հայ բնակիչ, որոնց մեծ մասը՝ քաղաքում:

Այժմ անդրադառնանք Ակնի հարակից գյուղերին: Ակնի հայաշատ գյուղերից էր Ապուչեխը, որի մասին հիշատակությունները սկսում են շատ վաղ ժամանակներից: Հայ բնակիչների նախնիները, ըստ Հ. Ճանիկյանի, հաստատվել էին այստեղ Վասպուրականից, թեև մեկ այլ վարկածի համաձայն, նրանք եկել էին Ջուղայից[25]: Ապուչեխը թե տների արտաքին, թե ներքին հարմարավետությամամբ, չէր զիջում Ակնին: Ինչպես Արևմտյան Հայաստանի բազմաթիվ այլ բնակավայրերում, Ակնի գավառակում ևս կրոնական անհանդուրժողականության, բռնությունների գործելակերպը եզակի չէր: Այսպես, Ապուչեխում 1876 թ. դեկտեմբերի 27-ին «խումբ մը վայրենաբարոյ տաճիկներ միանալով՝ յանդուգն յարձակմամբ քանիցս փորձեր ըրած են եկեղեցւոյ զանգակատունը բռնկցնել, սակայն գիւղացիք արթուն գտնուելով ձգուած կրակն յաջողեր են մարել» [26]: Հաջորդ օրը եկեղեցին հրդեհելու փորձը կրկնվել է, հրդեհը մարվել է: Այս անհաջող փորձից հետո արդեն թուրքերը քարերով կոտրում են առաջնորդարանի ապակիները: Թեև թշնամուն չի հաջողվել հասնել նպատակին, սակայն գյուղացիներն ահ ու սարսափի մեջ էին հայտնվել: Նման դեպքերը եզակի չէին:

1880-ականներին Ապուչեխն ուներ 400 տուն բնակիչ, որից կեսը՝ հայ, կեսը՝ թուրք, մինչդեռ 40-50 տարի առաջ հայերի թվաքանակն այս բնակավայրում, ըստ ժամանակակիցների, 80-100 տուն ավելի էր: Հայ բնակչության

[23] **Քէչեան Ա.,** նշվ. աշխ., էջ 34:

[24] Նույն տեղում, էջ 191:

[25] Նույն տեղում, էջ 61:

[26] Լոյս, Կ. Պոլիս, 1877, ԻԸ:

թվաքանակի նվազումը հետևանք էր գաղթի, որը հատուկ էր ինչպես Ակն քաղաքին, այնպես էլ նրա գյուղերին: Գյուղից հեռացողների մի մասը հաստատվել էր Խարբերդում, մյուսները՝ Մարզվան և այլ բնակավայրերում: Բացի այդ, 40 տարի առաջ տեղի ունեցած հրդեհը ևս պատճառ էր հանդիսացել հայերի թվաքանակի նվազմանը: Այնուամենայնիվ, Ապուչեխում դեռևս հայերը մի քանի տնով ավելի էին թուրքերից[27]: Հետաքրքիր եզրահանգման է գալիս Ա. Քեչյանը, ըստ որի, գյուղի թուրքերը ավելի ուշ են հաստատվել այստեղ, «որովհետեւ իրենց տուներուն մեծագոյն մասը գիւղին շուրջն էին, բացի մզկիթէ մը եւ քանի մը տուներէ»[28]:

Ակնի մյուս խոշոր գյուղը Կամարակապն էր: Այս գյուղի հայությունը ևս հաստատվել էր այստեղ Վասպուրականից: Հետագայում Կամարակապում են հաստատվել նաև հայեր Դերսիմ-Օվաճըգից, Չարսանջակի կողմերից: 1872 թ. Կամարակապում հաշվվում էր 160 տուն հայ բնակիչ: «Մամուլ»-ում մի հրապարակման հեղինակ նշում է, որ գրեթե յուրաքանչյուր տնից Կ. Պոլիս՝ արտագնա աշխատանքի էր մեկնել մեկական մարդ[29]: Հ. Ճանիկյանը նշում է, որ 50 տարի առաջ Կամարակապում կար 200 տնից ավելի հայ: Նրանց մի մասը գաղթել է Կ.Պոլիս, Ամասիա, այլ բնակավայրեր: 1880-ական թթ. Կամարակապում ապրում էր 150 տուն հայ բնակիչ[30]:

Ակնի գյուղերից էր Կարուշլան՝ 40 տուն հայ, 20 տուն թուրք բնակչությամբ, Նարվերը՝ 25 տուն հայ, 10 տուն թուրք բնակչությամբ[31]: Նարվերի հայերի նախնիները ևս եկել էին Անիից ու Վասպուրականից: Ակնի գյուղերից Լիճքն ուներ 70 տուն հայ և 30 տուն թուրք բնակիչ[32]: Ա. Քեչյանը գրում է, որ այս գյուղի հայերի վիճակը վատացել է հատկապես 1880-ականին, մինչ այդ նրանք Կ. Պոլսում զբաղվել են ջրաղացպանությամբ և բավարար վաստակել: Հետագայում նրանք ևս ոչ միայն մեկնում էին արտագնա աշխատանքի, այլ ընտանիքներով դիմում պանդխտության[33], գյուղում մնացողները զբաղվում էին երկրագործությամբ, մասամբ՝ առևտրով:

---

[27] **Ճանիկեան Յ.,** նշվ. աշխ., էջ 45:
[28] **Քէչեան Ա.,** նշվ. աշխ., էջ 61:
[29] Մամուլ, Կ. Պոլիս, յունուար 1872, թիւ 188:
[30] **Ճանիկեան Յ.,** նշվ. աշխ., էջ 47–48:
[31] Նույն տեղում, էջ 50–51:
[32] Նույն տեղում, էջ 53:
[33] **Քէչեան Ա.,** նշվ. աշխ., էջ 99:

Ակնի գյուղերից առանձնանում էր Բենկան, որն ուներ 160 տուն հայ բնակիչ[34]: Այս գյուղի վերաբերյալ ավելի վաղ տվյալ է բերված "The Missionary Herald" ամսագրում, որի համաձայն Բենկան հարուստ հայկական գյուղ էր՝ 100 տներով[35]: Բենկայի հայությունը, ըստ Հ. Ճանիկյանի, ինքնապաշտպանության մեծ փորձ ուներ, ապացույցն այն էր, որ, ըստ հեղինակի, մինչ այդ պահը գյուղը միակն էր շրջակայքում, որ տուրք չէր վճարում քրդերին:

Ակնի Վանք, Ձորակ, Շրզու գյուղերում ապրում էին ուղղափառ հայեր՝ հայ հոռոմներ: Աստվածաբան Գ. Ղազարյանը կարծում է, որ Ակնի ուղղափառ հայերի գոյության ամենավաղ սահմանը X դարն է[36]: Ուղղափառ հայերը ևս դիմում էին պանդխտության, և հիմնականում՝ Կ. Պոլիս: Հայ հոռոմներից ոմանք, հունական կրթություն ստանալով Կ. Պոլսում, մոռանում էին իրենց հայկական ծագման մասին: Հ. Ճանիկյանը հնարավոր է համարում, որ այլ գյուղերում ևս անցյալում եղած լինեն հայ հոռոմներ, որոնք կամ գաղթել են, կամ՝ թրքացել:

Ակնի ուղղափառ հայերի գոյության փաստը զարմացրել է դեռևս 1830-ականներին միսիոներական առաքելությամբ Հայաստան եկած Օտարերկրյա առաքելությունների ամերիկյան կոմիտեի միսիոներներ Է. Սմիթին ու Հ. Դուայթին, որոնք իրենց ուղևորության ժամանակ Էջմիածնում հանդիպել են հունադավան մի հայի: Վերջինս պատմել է, որ իր ծննդավայրը գտնվում է Դիարբեքիրից 30 ժամ հեռավորության վրա: Մոտակայքում կա 5 գյուղ, որոնց բնակիչները խոսում են հայերեն, բայց հունական եկեղեցու հետևորդ են, ունեն քահանա, ով ենթարկվում է Կ. Պոլսի հույն պատրիարքին: Նրանց եկեղեցական գրքերը հայերեն են: Հունական եկեղեցու հետևորդ այլ հայերի մասին հեղինակները տեղեկություն չունեին[37]:

Վանք գյուղի հայ բնակիչներն առանձնացել են ազնվաբարո վարքով ու հյուրասիրությամբ: Ուշագրավ է, որ պահպանված տեղեկությունների համաձայն, երբ վանքցիները XVIII դարի կեսերին դիմել են իշխանություններին՝ եկեղեցի կառուցելու արտոնություն ստանալու համար, թուրքերը մերժել են՝ պատճառաբանելով, թե օսմանյան տերությունը «հայ հոռոմ» համայնք չի ճանաչում: Երբ բոլոր ջանքերը, այդ թվում նաև տիեզերական պատրիարքի մի-

---

[34] **Ճանիկեան Յ.,** նշվ. աշխ., էջ 53:

[35] The Missionary Herald, 1855, November, p. 339.

[36] **Ղազարյան Գ.,** Ակնի ուղղափառ հայերը (հայ հոռոմներ), www.Religions.am.

[37] **Smith E. and Dwight H. G. O.,** Missionary Researches in Armenia: including a Journey through Asia Minor, and into Georgia and Persia, London, 1834, 472 p., p. 418–419.

ջամտությունը, ապարդյուն են անցել, հայ հոռոմները դիմել են Կոստանդնուպոլսի հայ ամիրաներին: «Մինաս վրդ. Ակնեցու (Ամենայն Հայոց կաթողիկոս՝ 1751–1753 թթ.) հնարամիտ խորհրդով, ամիրաներ Սեղբոս Երևանյանի ու Միսաք Միսաքյանի օգնությամբ հաջողվել է արտոնություն ստանալ՝ կառուցելու առաքելական եկեղեցի, սակայն իրականում կառուցվել է ուղղափառ եկեղեցի՝ կից առաքելական փոքր մատուռով՝ տարին մեկ անգամ պատարագելու և ազատ ուխտագնացության պայմանով: Ահա այսպես է, որ Վանքի եկեղեցու բակում կառուցվել է հայ առաքելական Սբ. Սարգիս մատուռը»[38]: Գյուղը 1880-ականներին ուներ ընդամենը 40 տուն հայ, 5-10 տուն՝ թուրք բնակիչ, մինչդեռ 25-30 տարի առաջ ունեցել է 80 տուն բնակիչ[39]: Գյուղի բնակչությունը նվազել է, քանի որ այն երկու անգամ հրկիզվել է, ապա վերստին կառուցվել: Նույն վիճակն էր և Ձորակում, որը նախկինում ունեցել է 30 տուն հայ հոռոմ բնակիչ, 1880-ականներին՝ 10 տուն հայ հոռոմ, 10 տուն թուրք: Շրզուն ուներ 30 տուն հայ հոռոմ, 20 տուն թուրք բնակիչ[40]:

Ակնում կար նաև փոքրաթիվ հայ բողոքական համայնք: Նշենք, որ 1850-ականներից Օսմանյան կայսրության տարածքում և նախ և առաջ Արևմտյան Հայաստանում բողոքականության տարածմանն ուղղված միսիոներների գործունեության համար Ակնը եղել է ոչ այդքան արդյունավետ տարածք, որքան, օրինակ Խարբերդը, Արաբկիրը, Էրզրումը և այլ բնակավայրեր: Ինչպես վերևում արդեն նշել ենք, սա նաև համապատասխանում էր միսիոներների կանխատեսումներին: Խնդիրը նրանում էր, որ ակնցիք ապրում էին, ինչպես նշվում է գրեթե բոլոր աղբյուրներում, ավելի բարեկեցիկ կյանքով, քան շրջակա այլ բնակավայրերում, իսկ դա միսիոներների գործունեության համար համեմատաբար բարդ միջավայր էր, քան անապահով, չքավոր բնակչության մեջ աշխատելը:

ԳԱԹ ֆոնդերում պահպանվում են Ակնի գավառակի բնակավայրերին վերաբերող 1878–1880 թթ. արված վիճակագրություններ, որոնք ունեն աննշան տարբերություններ: Դրանց համաձայն գավառակում կար շուրջ 10.000-անոց հայ և 6000-ի չափ թուրք բնակչություն[41]:

Ամփոփելով նշենք, որ չնայած նախկինում գրանցված իսլամացման դեպքերին, գաղթականության հոսքին, արտագնա աշխատանքի մեկնողների

---

[38] **Ղազարյան Գ.,** Ակնի ուղղափառ հայերը (հայ հոռոմներ), www.Religions.am

[39] **Ճանիկեան Յ.,** նշվ. աշխ., էջ 57:

[40] Նույն տեղում, էջ 59:

[41] ԳԱԹ, Թ. Ազատյան ֆ., 34/III, 35/III:

թվաքանակին, XIX դարի ընթացքում Ակն քաղաքն ու շրջակա գյուղերը հայաշատ բնակավայրեր էին, որտեղ գրեթե յուրաքանչյուրում հայ բնակչությունը թվաքանակով գերազանցում էր մահմեդականներին:

THE ARMENIAN POPULATION OF AKN REGION IN 1830–1880s

BABLUMYAN A.

Summary

Akn region is situated in the southwestern part of Western Armenia. This region was formerly part of Sebastia eyalet and later of Kharberd vilayet. In the territory of Akn region there were numerous settlements populated by Armenians forcibly Islamized in the 17th–18th centuries. Other segments of Armenians resettled in other populated areas of Western Armenia. This tendency of migration continued in the 19th century as well, and in this period the rate of migration sharply increased. The Armenians moved to cities, in particular, from Akn to Constantinople, Kharberd, Smirna, etc.

Data on Islamizing and resettlement of Armenians from Akn can be found in a number of studies carried out by authors like G. Chanikian, G. Srvandztiants, S. Eprikian, A. Khechian, etc. Valuable information concerning the Armenian population of Akn can be found in foreigners' memories, particularly, in the reminiscences by the British engineer Barkley and G. Brant who was the American consul in Erzrum and in the publications by the American missionaries as well.

Despite the constant migration, the number of Armenians in the region of Akn was stable.

According to the statistical data of 1878–1880, approximately 10000 Armenians and 6000 Turks lived in the region of Akn.

АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ ОБЛАСТИ АКН В 1830–1880 ГГ.

БАБЛУМЯН А.

Резюме

Область Акн находится в юго-западной части Западной Армении. Данная область являлась частью эйалета Себастия, впоследствии вилайета Харберд.

На территории области Акн имелось множество селений, армянское население которых еще в XVII–XVIII вв. было исламизировано, часть же армян переселилась в другие населенные пункты Западной Армении. Эта тенденция продолжалась и в XIX веке, когда темпы миграции армян из Акна резко возросли. Армяне мигрировали из Акна в крупные города, в частности, Костантинополь, Харберд, Смирна и т.д.

Данные об исламизации и переселениях армянского населения этого региона приводятся в исследованиях армянских авторов Г. Чаникяна, Г. Срвандзтянца, С. Эприкяна, А. Кечяна и многих других. Ценные сведения об армянском населении Акна содержатся в воспоминаниях иностранцев, в частности, британского инженера Баркли, британского консула в Эрзеруме Дж. Бранта, в публикациях американских миссионеров.

Несмотря на постоянную миграцию, в области Акн число армян было стабильно. Согласно статистическим данным на 1878–1880 гг., в области Акн проживало около 10000 армян и около 6000 турок.